Հավելված 3
Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր
քաղաքացիական ավիացիայի
գլխավոր վարչության պետի
2016 թվականի ապրիլի 26-ի
թիվ 71-Ա հրամանի

ԿԱՌԱՄԱՏՈՒՅՑՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Կառամատույցում աշխատանքների կազմակերպման ուղեցույցը (այսուհետ՝ Ուղեցույց) մշակված է Չիկագոյին Կոնվենցիայի N14 Հավելվածի, ԻԿԱՕ-ի N9137 ձեռնարկի (Doc.9137) Մաս 8-ի, ԻԿԱՕ-ի N9476 ձեռնարկի (Doc.9476) և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) պետի 2007 թվականի ապրիլի 23-ի N64-Ն հրամանով հաստատված <<ՀՀ սերտիֆիկացված աերոդրոմների շահագործման պայմաններով>> (այսուհետ՝ Շահագործման պայմաններ) սահմանված պահանջների համաձայն և սահմանում է աերոդրոմ շահագործողի կողմից աերոդրոմի կառամատույցում աշխատանքների կազմակերպման գործընթացը:
1) Սույն ուղեցույցի իմաստով Աերոդրոմ շահագործող է համարվում օդանավակայանի սեփականատերը կամ այն իրավաբանական անձը, որն իրականացնում է օդանավակայանի շահագործումը կամ կոնցեսիոն կառավարումը:
2. Կառամատույցում աշխատանքների կազմակերպման գործընթացը կանոնակարգում է օդանավերի և հատուկ տրանսպորտային միջոցների երթևեկությունը, ինչպես նաև անձնակազմի գործողությունները կառամատույցում՝ ուղղված թռիչքների անվտանգության ապահովմանը:
1) Սույն ուղեցույցի իմաստով հատուկ տրանսպորտային միջոցներ են համարվում այն մեքենա-մեխանիզմները, որոնք նախատեսված են օդանավերի սպասարկման, ինչպես նաև կառամատույցի արհեստական ծածկույթի շահագործողական վիճակի պահպանման համար:
3. Կառամատույցում աշխատանքների կազմակերպումը կարող է իրականացվել համագործակցության սկզբունքով, մասնավորապես՝ օդային երթևեկության սպասարկման մարմնի, օդանավերի վերգետնյա սպասարկում իրականացնող ծառայության և աերոդրոմ շահագործողի կողմից:
1) Օդային երթևեկության սպասարկման մարմնի կողմից տրվում են թույլտվություններ օդանավի շարժիչների գործարկման և քարշակման կամ գետնավարման մեկնարկի համար:
2) Օդանավերի վերգետնյա սպասարկում իրականացնող ծառայության կողմից իրականացվում է օդանավերի սպասարկումը: Սույն ուղեցույցի իմաստով օդանավերի սպասարկում է համարվում օդանավերի կայանման/քարշակման ապահովումը կայանատեղում/ից/, օդանավերի առևտրային սպասարկումը՝ ուղևորների մատեցման/իջեցման ապահովումը (շարժասանդուղքի կամ փոխագուցավոր կամրջակի շահագործումը), ուղեբեռի և/կամ բեռի, փոստի բեռնումը/բեռնաթափումը, օդանավերի վերգետնյա էլեկտրասնուցման ապահովումը (ստացիոնար կամ շարժական միջոցներով), օդանավերի խմելու ջրի լցավորման, սան.հանգույցների և սրահի մաքրման ապահովումը,

օդանավերի հակասառցակալման հեղուկով մշակումը և շարժիչների գործարկումն արտաքին միջոցներով(օդային հոսքի միջոցով), ուղևորների սննդի մատակարարումը:
3) Աերոդրոմ շահագործողի կողմից իրականացվում է՝
ա. Կայանատեղերի հատկացումը:
բ. Օդանավերի ուղեկցումն ըստ անհրաժեշտության:
գ. Օդանավերի լցավորումը վառելիքանյութերով:
դ. Կառամատույցի/ների/ հակահրդեհային անվտանգության ապահովումը:
ե. Կառամատույցի արհեստական ծածկույթի շահագործողական վիճակի ապահովումը:
զ. Կայանատեղերի արհեստական ծածկույթի մաքրումը վառելիքաքսայուղերի և/կամ ռետինե նստվածքների հետքերից:
է. Ավիացիոն և թռիչքային անվտանգության ապահովումը:
4) Օդանավերի վերգետնյա սպասարկումը կարող է իրականացվել առանձնացված կազմակերպության/թյունների/, աերոդրոմ շահագործողի համապատասխան ծառայության կամ օդանավ շահագործողի/ների/ կողմից:
4. Անկախ կառամատույցում աշխատանքներ իրականացնող ծառայությունների տեսակից և քանակից աշխատանքների կազմակերպման պատասխանատվությունը կրում է աերոդրոմ շահագծողը:
5. Աերոդրոմ շահագործողը՝
1) Ապահովում է կառամատույցում հատուկ տրանսպորտային միջոցների երթևեկման ուղիների և կայանման գոտիների մականշումները:
2) Սահմանում է կառամատույցում հատուկ տրանսպորտային միջոցների երթևեկման կանոնները. Գլխավոր վարչություն պետի 2003 թվականի դեկտեմբերի 18-ի N246-Ն հրամանով հաստատված <<Քաղաքացիական ավիացիայի բնագավառում շահագործվող վերգետնյա միջոցների և մատուցվող ծառայությունների ապահովության ու անվտանգության կանոնակարգի>> (այսուհետ՝ Կանոնակարգ) համաձայն:
3) Տարին առնվազն երկու անգամ կազմակերպում և անցկացնում է կառամատույցում աշխատանքներ իրականացնող անձնակազմի տեսական վերապատրաստում՝ ուղղված թռիչքների անվտանգության և անհատական անվտանգության կանոնների ապահովմանը:
ա. Վերապատրաստումների ծրագրում հաշվի են առնվում սահմանափակ տեսանելիության պայմաններում և ձմեռային ժամանակաշրջանում աշխատանքների անվտանգության առանձնահատկությունները:
բ. Սույն ենթակետի պահանջները տարածվում են կառամատույցում աշխատանքներ իրականացնող բոլոր աշխատակիցների վրա, անկախ նրանց կազմակերպչական ենթակայությունից:
4) Մշակում է միջոցառումների ծրագիր կառամատույցի և օդանավակայանային համալիրի հնարավոր գերբեռնվածությունից խուսափելու համար:
6. Ուղեցույցի 5-րդ կետով սահմանված գործառույթների ապահովման նպատակով աերոդրոմ շահագործողի կողմից պետք է նախատեսվի կառամատույցում աշխատանքների կազմակերպման ծառայություն (այսուհետ՝ Ծառայություն):
1) Ծառայությունը համագործակցում է օդային երթևեկության սպասարկման մարմնի <<Աշտարակ>> կարգավարական կետի հետ. Շահագործման պայմանների 83-րդ կետի համաձայն մշակված կանոնակարգին համապատասխան:
2) Ծառայությունը պետք է ապահովված լինի ռադիոկապի միջոցներով:
3) Ծառայությունը կառամատույցում ապահովում և սահմանում է վերահսկողություն սահմանափակ տեսանելիության պայմաններում թռիչքների իրականացման ընթացակարգի կիրառումից բխող գործառույթների իրականացման նկատմամբ:

4) Ծառայությունը վերահսկում է հատուկ տրանսպորտային միջոցների երթևեկման, ինչպես նաև օդանավերի սպասարկման գործընթացը:
5) Կառամատույցում առաջացած վթարային իրավիճակների դեպքում Ծառայությունն անմիջապես ազդարարում է աերոդրոմի վթարափրկարարական ծառայությանը և իրականացնում է նախնական գործողություններ՝ ուղղված իրավիճակի կարգավորմանը:
ա. Կառամատույցը պետք է ապահովված լինի վթարային ազդարարման համակարգով:
6) Ծառայությունը կրում է պատասխանատվություն կառամատույցում իրականացվող բոլոր աշխատանքները (անկախ ում կողմից են դրանք իրականացվում) սահմանված ընթացակարգերով իրականացնելու համար: